ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԳՈԳԱՐԱՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը նախկին Սպիտակի տարածաշրջանի ամենահին գյուղերից է: Ըստ Սովետական հանրագիտարանի գյուղը հիմնադրվել է 1727-1728թթ.: Սակայն ըստ պատմամշակութային հուշարձանների, գյուղի տարածքում առկա դամբարանադաշտերի, IV-ից VI-րդ դարի թվագրում ունեցող եկեղեցու գյուղը ավելի հին է, քան գրված է տեղեկատվության մեջ: Գյուղը գտնվում է Բազումի լեռների հարավային ստորոտում, ծովի մակերևույթից
բարձր է 1863մ-1950մ: Գյուղը ժամանակին Գորան անվան տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում : 1831 թ. և 1840 թ. մարդահամարում Գոգարանի համար արձանագրված է երկու առանձին ծխական նկարագրություն: Առաջինում ներկայացված է գյուղի հնաբնակների ցուցակը, որոնց թիվը կազմում է 12 ընտանիք: Բացի հիմնական ցուցակից, Վրաստանի պետական արխիվում պահպանվել է նաև Գոգարանում ապաստանած գաղթական ընտանիքների ցուցակը: Համաձայն 1831 թ. Փամբակի ուղեմասում ապաստանած՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների ծխական նկարագրության՝ Գոգարանում ապաստանել էր երեք ընտանիք Մուշից և Կարսից: Այնուհետև 1831-1840 թթ. ընթացքում Գոգարանը համալրվում է ևս 12 ընտանիքով, որոնք սակայն բնիկ արևելահայեր են Արարատյան դաշտից, Լոռվա ձորից և Ղազախի, այժմ Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղից:
Գյուղում են գտնվում Սուրբ Աստվածածին (4-րդ դար) և 5-րդ դարի այլ եկեղեցիները, Սբ. Ծիրանավոր, «Թուխ Մանուկ», Սբ. Սարգիս մատուռները և «Պատվար» ամրոցը: Շրջակայքում պահպանվել են Խորոզ և այլ գյուղատեղիներ :
Ըստ պատմամշակութային հուշարձանների՝ գյուղի մերձակա դամբարանադաշտերի, IV-ից VI դարի թվագրվող եկեղեցու, գյուղն ունի ավելի քան 27 դարյա պատմություն: Գյուղում պեղված նոր դամբարանը, որը Հայաստանում պեղված հայտնի այլ դամբարաններից տարբերվում է ոճով ու գտածոներով, հնագետների զարմանքն է հարուցել: Այն, ի տարբերություն հարևան՝ հիմնականում հողաշեն դամբարանների, սալաքարային է: Դամբարանը պատկանում է մ.թ.ա. 9-7 -րդ դդ. (երկաթի դար) :
Գոգարանն ունի միջնակարգ դպրոց , որը կառուցվել է 2002 թ. «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից :

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բնակավայրը գտնվում է Բազումի լեռների հարավային ստորոտում ՝ 57.34 կմ քառ. ընդհանուր մակերեսով , ծովի մակերևույթից բարձր է 1864 մ: Համայնքը մարզկենտրոնից հեռու է 35 կմ , իսկ Վանաձոր-Գյումրի գլխավոր ճանապարհից 5 կմ : Ձմեռը խստաշունչ , իսկ ամառը՝ զով : Որպես լեռնային համայնք աճում են գրեթե բոլոր տեսակի հացաբույսերը (ցորեն , գարի , աշորա և այլն): Բանջարաբոստանային կուլտուրաներից լավ աճ են ապահովում կարտոֆիլը , կաղամբը , բազուկը , գազարը , սխտորը , սոխը և այլն : Բնակավայրն ունի 640.81 հա վարելահող , որից 65 հա պահուստային հողեր են , 539 հա ՝ սեփականաշնորհված , որից չի մշակվում ավելի քան 320 հա հող : Որոշ վարելահողեր վերածվել են խոտհարքների :

Բնակչությունը ՝ 1255 մարդ :

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման Գոգարանում բարեխառն է , ձմռանը ՝ խստաշունչ , ամռանը ՝ մեղմ :

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) -600

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C) - 20

Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C) - 25

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	15
2.2) մայրաքաղաքից (կմ)	115
2.3) մարզկենտրոնից (կմ)	35
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	40
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	15
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	6
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	10
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1864
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	5,73/5734,91
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Սարահարթ , Շիրակամուտ
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	077 42 73 35
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո , 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1255
2. Գրանցված ծնունդների քանակը	16
2.Մահացության դեպքերի քանակը	5
3.Ամուսնությունների քանակը	2
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	264
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	54
7. Կենսաթոշակառուների քանակը	175
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	56

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	15868,5
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	167

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2020թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	4884,98
2. Բնակավայրերի հողեր (հա)	79,08
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	28,16
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	1,37
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	43,13
7. Անտառային	691,45
8. Ջրային	6,74
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	598
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	297
11. Խոզերի գլուխաքանակը	46

12. Գյուղատնտեսական տեխնիկա	22
12.1 տրակտորներ (քանակը)	18
12.2 կոմբայններ (քանակը)	1
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	3
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	20
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	12
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10.Ներբնակավայրային երթուղիների առկայություն (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1.Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	4
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	1
2.Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	1

11.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը
Բնակավայրը չունի մանկապարտեզ	պետական աջակցություն
Համայնքային կենտրոն	պետական աջակցություն
Մարզադահլիճ	պետական աջակցություն